



ԵՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Զ Ե Կ ՈՒ Յ Յ

«ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԸ ԱՆՁԱՆՑ ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ
ԻՐԱՎԱԿԻՐԱՌԻ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ, ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ
ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ»-Ի
ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ
ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ» ԾՐԱԳԻՐ





Սույն զեկույցը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Սոցիալական Տեխնոլոգիաների Կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Կոռուպցիոն ռիսկերը անձանց կալանավորման իրավակիրառ պրակտիկայում, և օրենսդրական խոչընդոտների բարելավման հիմնահարցեր»-ի հանրային քաղաքականության մոնիթորինգային և բարելավման» ծրագրի շրջանակներում:

Ծրագրի արժեքը կազմել է 4.800.000 ՀՀ դրամ:

Ծրագրի տևողությունը կազմել է 2019թ. հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ը:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Սոցիալական Տեխնոլոգիաների Կենտրոն» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Ծրագրի ղեկավար՝ Գեղամ Գրիգորյան
«Սոցիալական Տեխնոլոգիաների Կենտրոն» ՀԿ Նախագահ

Ղեկավարի օգնական՝ Ազնիվ Կարապետյան

Ծրագրի փորձագետներ՝

Վրեժ Գասպարյան
Մարինե Պետրոսյան
Աննոլդ Վարդանյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ----- ԷՋ 4

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ----- ԷՋ 7

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ----- ԷՋ 11

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՆԱԽԱԳԻԾ----- ԷՋ 34

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Կարևորելով Հայաստանում ընթացող հասարակական-քաղաքական նոր իրադրության պայմաններում կատարվող հակակոռուպցիոն բարեփոխումները, «Սոցիալական Տեխնոլոգիաների Կենտրոն» հասարակական կազմակերպությունը մշակել է հանցանք կատարած անձանց որպես խափանման միջոց կալանավումը ընտրելու իրավակիրառ պրակտիկայում հնարավոր կոռուպցիոն ռիսկերը և դրանց նպաստող օրենսդրական խոչընդոտները վերացնելու, այդ ոլորտի բարելավման վերաբերյալ փաստարկված հանրային քաղաքականության և բարելավման սույն մոնիթորինգային ծրագիրը՝ (այսուհետ՝ Ծրագիր):

ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 581-Ա որոշմամբ հաստատված կառավարության ծրագրի հավելվածի 5.1. կետով որպես «Մարդու իրավունքների ոլորտի կարևորագույն խնդիր» նշված է «մարդու ազատության սահմանափակման օրենսդրական հնարավորությունների կամայական կիրառումը»:

Նույն պարբերությունում, որպես լուծում սահմանված է նաև, որ «Կառավարությունը պետք է քաջալերի ազատության զրկելու հետ չկապված խափանման միջոցների կիրառումը: Բացի դրանից, պետք է բացառել այն իրավիճակը, երբ կալանքի ենթարկված որևէ անձ քրեակատարողական հիմնարկում չունի օրենքով նախատեսված քննադատելի: Կալանավորված և ազատագրված անձանց թիվը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պայմանների լիարժեք ապահովման հնարավորությունների հետ»:

Խնդիր՝

Առ այսօր հանրային քրեական քաղաքականության ոլորտում շարունակում է հրատապ խնդիր մնալ ենթադրյալ հանցանք կատարած անձանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու իրավապահ մարմինների և դատարանների զանգվածային մոտեցումը.

Իր հերթին ազատությունից զրկելու միջոցների չարաշահումը հաճախ քրեական արդարադատության համակարգային թերությունների նշան: Սա կարող է հանգեցնել քրեական գործերով մեղադրյալների իրավունքների պաշտպանության անարդյունավետությանը, ինչպես նաև ազատագրված հետ չկապված միջոցները և սանկցիաները կիրառելու, կատարելու և վերահսկելու ինստիտուցիոնալ տեսանկյունից էֆֆեկտիվության պակասի: Այն նաև հաճախ մարդու իրավունքների խախտումների և կալանավորման համակարգի ծանրաբեռնվածության հետ առնչվող

հասարակական խնդիրների պատճառ է, ինչպիսիք են՝ ազատագրկման վայրերի մարդաշատությունը, կալանավորված անձանց հանդեպ ցուցաբերած վատ վերաբերմունքը, կալանավայրերում առկա անմարդկային պայմանները, ազատագրկման վայրերում սովորույթի ուժով գործող ներքին արատավոր կարգերը և բարքերը, ազատագրկման վայրերում աշխատակիցներին ներկայացվող մասնագիտական հատուկ չափանիշների բացակայությունը, աշխատակիցների ոչ կոմպետենտությունը, նրանց կողմից արտահայտված խտրական վերաբերմունքը անազատության մեջ գտնվող անձանց նկատմամբ, և այլն:

Այլ կերպ կալանքը որպես խափանման միջոցի կիրառման զանգվածային մոտեցումը բացի այն, որ առաջացնում է «Մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների» խախտումների բազմաթիվ խնդիրներ, նաև պարունակում է լուրջ կոռուպցիոն ռիսկեր, որոնց վերահանելը հնարավոր է հարցին բացառապես համակարգային լուծում տալու պարագայում միմիայն՝ զուգորդված օրենսդրական լուծումներով, մասնակցային հանրային քաղաքականությամբ, պաշտոնատար անձանց օրինավոր և բարեխիղճ վարքագիծն ապահովող ինստիտուցիոնալ համակարգի ձևավորմամբ:

Նպատակ՝

Իրավակիրառ պրակտիկայում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և դատարանների կողմից դրանք բավարարելու գործընթացը մոնիթորինգի ենթարկելու գործիքակազմի միջոցով պարզել՝

1/ կոռուպցիոն ռիսկերի հավանական առկայության հիմքերը (պաշտոնատար անձանց անբարեխիճ և ոչ օրինավոր վարքագիծ, սոցիալական վիճակ, բրգաձև համակարգված գործելաոճ, և այլն),

2/ կամայականության և կարծրատիպերով առաջնորդվելու գործակիցը վարույթն իրականացնող մարմինների գործելաոճ,

3/ օրենսդրական խոչընդոտները, որոնք կաշկանդում են պետական մարմիններին կիրառելու ազատությունից զրկելու հետ չկապված այլ խափանման միջոցներ,

4/ Հանրային կարծիքի ուսումնասիրություն, քանի որ համատարած մտահոգություն կա, որ կալանավորում կիրառելու մասին որոշումները կանխորոշված են:(Հարցախույզներ՝ փաստաբանների, նախկինում կալանավորված անձանց, տարբեր տարածաշրջանների մարզերի բնակչության շրջանակներում)

5/ Նախաքննության գաղտնիության պահպանման ուժը կորցրած գործերով ուսումնասիրել կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին դատարանների որոշումները, նկատի ունենալով, որ տարածված կարծիք կա, որ դատարանները հղում են կատարում Եվրոպական կոնվենցիային միայն մինչդատական կալանքի կիրառումը հիմնավորելու համար՝ անտեսելով այն վճիռները, որոնք պաշտպանում են այլընտրանքային միջոցների կիրառումը:

Ակնկալվող արդյունք՝

1/ Ձեռք բերված տվյալների հիման վրա մշակել օրենսդրական առաջարկությունների փաթեթ և ներկայացնել պատկան մարմիններին, միջազգային և հասարակական կազմակերպություններին, հանրայնացնել և շարունակական գործընթացների միջոցով հասնել ոլորտում կոռուպցիայի նվազեցմանն ու բացառմանը, օրենսդրության բարելավմանը, պետական ծառայողների օրինավոր և բարեխիղճ վարքագիծ դրսևորելու ապահովմանը, մարդու իրավունքների ու ազատությունների խախտումների նվազեցմանը ու իսպառ բացառմանը:

2/ Մշակել կրթության ոլորտում կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի «INTES» մեթոդաբանությանը համահունչ նոր մեթոդաբանություն կամ նույն մեթոդաբանությունը ձևափոխել քրեական քաղաքականության ոլորտում ընդհանրապես և սույն խնդրահարույց ոլորտում մասնավորապես արդյունավետ գործիքակազմ ներդնելու և իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակության մասնակցությամբ այն կիրառելու արդյունքում հասնել տեսանելի և չափելի արդյունքների:

Միևնույն ժամանակ իհարկե ակնհայտ է նաեւ, որ որեւէ մի հետազոտություն չի կարող հիմք տալ 100%-անոց ճշմարիտ քաղաքական որոշման համար...

Սակայն իրականացվող հետազոտությունները և գնահատումները թույլ կտան բացահայտել այն ծրագրերն ու քաղաքականությունները, որոնք տալիս են ցանկալի արդյունքը՝ կիրառելով հստակ մշակված մեթոդաբանական հենք, որը և հենց ՓԱՍՏԱՐԿՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ բուն էությունն է ու պահանջվածությունը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ՝

Ծրագիրն իրականացնելու նպատակով պայմանագրեր ենք կնքվել՝
փորձագետներ՝ Մարինե Պետրոսյանի, Վրեժ Գասպարյանի,
Առնոլդ Վարդանյանի, «ԶԻ ԴԻԶԱՅՆ» և «Դիտակետ»
ընկերությունների հետ:

Փորձագետ Մարինե Պետրոսյանի կողմից ամբողջությամբ ուսումնասիրվել է կալանավորման հիմնահարցերի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի կայացրած գրեթե բոլոր որոշումները, ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները և ՀՀ դատախազության Կոլեգիայի համապատասխան որոշումները: Ուսումնասիրվել է մամուլի մի քանի տասնյակ հրապարակումներ: Փորձագետի կողմից մշակվել է պետական և շահագրգիռ այլ մարմիններին ուղղված Ծրագրի խնդիրներից բխող շուրջ 2 տասնյակ հարցեր ներառող հարցաթերթիկներ որը պատվիրված և էլ փոստով առաքվել է.

- ՀՀ հատուկ քննչական ծառայությանը,
- ՀՀ քննչական կոմիտեին,
- ՀՀ արդարադատության նախարարությանը,
- ՀՀ դատական դեպարտամենտին,
- ՀՀ ՄԻՊ-ին,
- ՀՀ փաստաբանների պալատին
- ՀՀ գլխավոր դատախազությանը:

Փորձագետի կողմից ուսումնասիրվել են ստացված հարցումների պատասխանները և ամփոփվել, որոնք ներառվել են Ծրագրի վերջնական զեկույցի մեջ:

«ԶԻ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ի հետ կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր՝ Ծրագրի նպատակների և խնդիրների վերաբերյալ Կազմակերպության պաշտոնեական <http://socialarmenia.org> կայքում առանձնացված հարթակ ստեղծելու, ինչպես նաև ծրագրի ընթացքում և այնուհետ տեխնիկական սպասարկում իրականացնելու վերաբերյալ Կազմակերպության պաշտոնեական <http://socialarmenia.org> կայքում ստեղծվել է մասնագիտական հարթակ՝ «Թիրախ Ոլորտներ» ,որը ներառում է «Արդարադատություն և Մարդու իրավունքներ» բաժինը:

Դիտակետ» ընկերության հետ կնքվել է փորձագիտական թվով 10 ուսումնասիրություններ կատարելու համար ծառայությունների մատուցման պայմանագիր: Փորձագիտական ուսումնասիրության շրջանակներում կատարվել են 10 հարցազրույցներ՝ գործող փաստաբանների և իրավաբան գիտնականների հետ, որոնց արդյունքները ներառված են սույն զեկույցի վերլուծական բաժնում:

Փորձագետ Վրեժ Գասպարյանի կողմից կատարվել է փորձագիտական ուսումնասիրությունների և պետական մարմինների պատասխանների հիման վրա կազմված ամփոփման համալիր ուսումնասիրություն:

Պատվիրված և էլ փոստով լրացուցիչ հարցումներ են ուղարկվել-
ՀՀ արդարադատության նախարարին՝ խնդրելով տրամադրել
այլընտրանքային խափանման միջոցների ներդրման
օրենսդրական նախագիծը պետական իրավասու մարմիններ՝
հետազոտության իրականացման համար անհրաժեշտ
տեղեկատվությունը ստանալու համար:

ՀՀ Ազգային ժողովի նախագահին՝ պարզելու համար, թե ՀՀ
Ազգային ժողովում ներկայումս արդյո՞ք շարունակվում է
քննարկվել դեռևս ՀՀ Ազգային ժողովի հինգերորդ գումարման
յոթերորդ նստաշրջանի օրակարգում ներառված ՀՀ քրեական
դատավարության նոր օրենսգրքի նախագիծը և եթե ոչ, արդյո՞ք
ՀՀ Ազգային ժողովում նախաձեռնված են ՀՀ քրեական
դատավարության գործող օրենսգրքով նախատեսված
խափանման միջոցների համակարգի վերանայման,
այլընտրանքային նոր խափանման միջոցների ներդրման
օրենսդրական նախագծեր:

ՀՀ գլխավոր դատախազին՝ պարզելու համար, թե ՀՀ գլխավոր
դատախազությունը կատարել է արդյո՞ք համապատասխան
ուսումնասիրություններ, մշակել համապատասխան օրենսդրական
նախագծեր՝ նախնական կալանքն այլ համարժեք խափանման
միջոցներով /բացի գրավից/ փոխարինելու տարբերակներ
ներդնելու ուղղությամբ:

Փորձագետ Վրեժ Գասպարյանի և Առնոլդ Վարդանյանի կողմից
ՀՀ ԱԺ-ին, ՀՀ արդարադատության նախարարությանը և ՀՀ
գլխավոր դատախազությանը ուղղված լրացուցիչ հարցումների
տրամադրած տվյալների ուսումնասիրության արդյունքներով
մշակել և ավարտին է հասցրվել հանրային քաղաքականության
բարելավման ծրագրի առաջարկությունների փաթեթը:

Մշակված բարելավման առաջարկությունների փաթեթը և դրանից բխող օրենսդրական նախաձեռնությունների՝ մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ նախագիծը ուղարկվել է ՀՀ Ազգային ժողով և ՀՀ արդարադատության նախարարություն;

Մենք՝ գործընկեր և շահագրգիռ այլ կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում հետամուտ ենք լինելու ներկայացված նախագաժի դրույթները կյանքի կոչելու և օրենքի ուժ ստանալու համար:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ-ՈՒՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՊԱՏԿԵՐԸ

ՀՀ-ում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ վերջին տարիների վիճակագրական տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ՝

- 2017 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ 2363 միջնորդություն, որից 2220-ը (93,9%) բավարարվել է, 12-ը (0,5%) բավարարվել է մասնակի, 127-ը (5,3%) մերժվել, 3-ը թողնվել է առանց քննության, իսկ 1-ը՝ 2017 թվականի դեկտեմբերի 29-ի դրությամբ եղել է անավարտ: Նույն ժամանակահատվածում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է գրավը՝ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց, կիրառելու մասին 788 միջնորդություն, որից 125-ը (15,9%) բավարարվել է, 4-ը (0,5%) բավարարվել է մասնակի, 641-ը (81,3%)՝ մերժվել, 8-ը՝ թողնվել է առանց քննության, իսկ 10-ը՝ 2017 թվականի դեկտեմբերի 29-ի դրությամբ եղել է անավարտ¹:

- 2018 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ 2044 միջնորդություն, որից 1935-ը (94,7%) բավարարվել է, 9-ը (0,5%) բավարարվել է մասնակի, 90-ը (4,4%)

1

Տե՛ս ՀՀ դատական դեպարտամենտի՝ համեմատական վիճակագրական վերլուծությունը 2017-2018թթ գործունեության վերաբերյալ՝ հասանելի է court.am կայքում:

մերժվել, 7-ը (0,3%) թողնվել է առանց քննության, իսկ 3-ը (0,1%) 2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ: Նույն ժամանակահատվածում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է գրավը՝ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց, կիրառելու մասին 906 միջնորդություն, որից 173-ը (19,1%) բավարարվել է, 713-ը (78,7%)՝ մերժվել, 9-ը՝ թողնվել է առանց քննության, 5-ը միացվել է մեկ վարույթում, իսկ 6-ը՝ 2018 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ²:

Վերոգրյալի հիման վրա պետք է արձանագրել, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվող կալանավորման միջնորդությունների ծանրակշիռ մասը գործնականում բավարարվում է, իսկ միակ այլընտրանքային խափանման միջոց՝ գրավի կիրառման ցուցանիշներն էականորեն ցածր են և վկայում են այդ խափանման միջոցի ոչ արդյունավետության մասին:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մինևույն ժամանակ, «Կառուցողական երկխոսություն հանձնառություն» ծրագրի շրջանակներում «Սոցիալական Տեխնոլոգիաների Կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Կոռուպցիոն ռիսկերն անձանց կալանավորման իրավակիրառ պրակտիկայում և օրենսդրական խոչընդոտների բարելավման հիմնահարցեր» ծրագրի շրջանակներում հանրային քաղաքականության մոնիթորինգի իրականացման, ոլորտի բարեփոխման, ծրագրային խնդիրների լուծման նպատակներով միջոցներ են ձեռարկվել կալանավորումը

2

Տե՛ս նույն տեղում:

որպես խափանման միջոց կիրառելու գործընթացի ուսումնասիրությունների վերաբերյալ պետական իրավասու մարմիններից անհրաժեշտ տեղեկություններ ստանալու համար:

Այսպես, կատարված հարցման արդյունքում ստացված՝ ՀՀ դատախազության կոլեգիայի 2017 թվականի օգոստոսի 4-ի նիստի արձանագրության ուսումնասիրությամբ պարզվեց, որ դատախազության կողմից սահմանվել են մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու և կալանավորման ժամկետը երկարացնելու վերաբերյալ հիմնավոր միջնորդությունների պատրաստման և դատարան ներկայացնելու, մինչդեռ պետական վարույթի ընթացքում մեղադրյալի սկզբնական և շարունակական կալանավորման իրավաչափության ներկայացվող նվազագույն պահանջներ, որոնք միտված են կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմնավորվածության բարձրացմանը:

ՀՀ դատախազության կոլեգիայի 2018 թվականի հունիսի 12-ի նիստի արձանագրության ուսումնասիրությամբ պարզվեց, որ ի թիվս այլոց, հանձնարարվել է, որպեսզի՝

- ոչ մեծ կամ միջին ծանրության (մինչև 5 տարի ժամկետով ազատազրկում նախատեսող) հանցագործությունների համար մեղսագրվող անձանց նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն դատարան ներկայացվի միայն այն դեպքում, երբ գործով ձեռք բերված փաստական տվյալների որոշակի ամբողջությամբ կհիմնավորվի, որ մեղադրյալն արդեն իսկ կատարել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որևէ գործողություն,

- նման հանցագործությունների համար մեղադրվող անձանց նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու

վերաբերյալ միջնորդություն դատարան ներկայացվի այն դեպքում, երբ մեղադրյալը ՀՀ տարածքում չունի բնակության մշտական վայր կամ մեղադրվում է կազմակերպված խմբի կամ հանցակցությամբ կոռուպցիոն բնույթի հանցանք կատարելու համար և քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ ազատության մեջ մնալով, մեղադրյալը կխոչընդոտի մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով,

- կալանքի ժամկետների երկարացման մասին միջնորդություն դատարան ներկայացվի միայն այն դեպքում, երբ գործով ձեռք բերված ապացույցների մանրամասն վերլուծության արդյունքում հաստատվում է կալանավորման հիմքերի իրական շարունակական առկայություն, իսկ վարույթն իրականացնող մարմինների կողմից դրսևորվել է նախաքննության խնդիրների լուծմանն ուղղված պատշաճ ջանասիրություն,

- խափանման միջոց ընտրելու կամ դրա ժամկետը երկարացնելու հարցի քննարկման յուրաքանչյուր դեպքում պարտադիր դիտարկվի այլընտրանքային խափանման միջոցների կիրառման հնարավորության հարցը և մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն դատարան ներկայացվի բացառապես այն դեպքերում, երբ խափանման այլ՝ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների կիրառումն օբյեկտիվորեն չի կարող երաշխավորել քրեական գործով վարույթի ընթացքում մեղադրյալի պատշաճ վարքագիծը,

- եթե մեղադրյալի նկատմամբ կիրառվել է կալանք խափանման միջոցը՝ պայմանավորված միայն վերջինիս քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգով, ապա պաշտպանության կողմի՝ կալանքը գրավով փախարհնելու մասին միջնորդություն ներկայացնելու դեպքում դատախազը մասնակցի նշված միջնորդության քննարկմանը դատարանում և եթե, ներկայացված պատճառաբանությունները հիմք են տալիս ենթադրելու, որ այլընտրանքային խափանման միջոցի կիրառումն օբյեկտիվորեն կարող է ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը, չառարկել դրա դեմ՝ որպես առավել արդյունավետ միջոց դիտարկելով մեղադրյալի պատշաճ վարքագծի երաշխավորումն ապահովող չափով, այդ թվում՝ անշարժ գույքի տեսքով, գրավի կիրառումը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, ՀՀ դատախազության կողմից մշակված և շրջանառության մեջ դրված կալանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառման իրավակարգավորումների, այդ թվում այլընտրանքային փախանման միջոցների ներդրմանն առնչվող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու նախագծի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առաջարկվում է ներդնել այնպիսի այլընտրանքային խափանման միջոցներ, ինչպիսիք են տնային կալանքը, վարչական հսկողությունը: Միաժամանակ, առաջարկվում է կալանավորման հիմքերի հիմնավորվածության աստիճանը տարբերակել՝ պայմանավորված մեղսագրվող հանցանքի ծանրության աստիճանից:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը պետք է փաստել, որ իրավասու մարմինները նույնպես մտահոգված են որպես խափանման միջոց համատարած կալանավորումը կիրառելու խնդրով և միջոցներ են ձեռնարկում դրա կիրառման հիմնավորվածությունը բարձրացնելու, այլընտրանքային խափանման միջոցներ ներդնելու ուղղությամբ:

ՇՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- ներպետական իշխանությունները, անձին ազատ արձակելու կամ կալանավորելու մասին որոշում կայացնելիս, պետք է փնտրեն նաև այլընտրանքային միջոցներ, որոնք թույլ կտան ապահովել տվյալ անձի ներկայությունը դատաքննությանը³,

- կալանքը պետք է կիրառվի որպես անձի ազատության իրավունքի սահմանափակման վերջին կամ ծայրահեղ միջոց, երբ այլ միջոցներով հնարավոր չէ լիարժեք երաշխավորել վարույթի պատշաճ ընթացքը⁴,

- կալանքի՝ որպես խիստ միջոցի, կիրառումը կարող է արդարացվել, երբ այլ՝ ներգործության ուժով նվազ միջոցների կիրառելիությունը քննարկվել է և որոշվել, որ դրանք բավարար չեն մասնավոր կամ հանրային շահերի պաշտպանությունն ապահովելու համար, ինչը կարող է պահանջել, որ անձը կալանավորվի⁵,

3

Տե՛ս *Idalov v. Russia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի՝ 2012 թվականի մայիսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 5826/03, 140-րդ կետ:

4

Տե՛ս, *mutatis mutandis*, *Sahin Alpay v. Turkey* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի վճիռը, գանգատ թիվ 16538/17, 181-րդ կետ:

5

Տե՛ս, *mutatis mutandis*, *Djundiks v. Latvia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 15-ի վճիռը, գանգատ թիվ 14920/05, 89-րդ կետ:

- 5-րդ հոդվածի 3-րդ կետը ամրագրում է ոչ միայն «ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունքը», այլ նաև նախատեսում է, որ «ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»⁶,

- գրավը կարող է պահանջվել այնքան ժամանակ, որքան առկա կլինեն կալանքը հիմնավորող պատճառները⁷:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ մինչդատական կալանքի վերաբերյալ հանձնարարականի 9-րդ կետի համաձայն՝ մինչդատական կալանքի կիրառման դեպքում դատարանը պետք է քննարկի, թե արդյոք այլընտրանքային միջոցներով կարելի է խուսափել կալանքի կիրառումից⁸:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված՝ կալանքի կիրառման, դրա համար անհրաժեշտ պայմանների և չարաշահումներից պաշտպանության երաշխիքների վերաբերյալ հանձնարարականի 4-րդ կետի համաձայն՝ կալանքի ոչ հիմնավոր կիրառումից խուսափելու նպատակով պետք է նախատեսվի այլընտրանքային միջոցների հնարավորինս լայն շրջանակ, առավել քիչ

6

Տե՛ս Khudoyorov v. Russia գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2005 թվականի նոյեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 6847/02, 183-րդ կետ:

7

Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Musuc v. Moldova գործով 2007 թվականի նոյեմբերի 6-ի վճիռը, գանհատ թիվ 42440/06, կետ 42, Aleksandr Makarov v. Russia գործով 2009 թվականի մարտի 14-ի վճիռը, գանգատ թիվ 15217/07, 139-րդ կետ:

8

Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ մինչդատական կալանքի վերաբերյալ 1980 թվականի հունիսի 27-ի թիվ R(80)11 հանձնարարականը:

սահմանափակումների կիրառմամբ՝ հաշվի առնելով հանցանքի կատարման մեջ կասկածվողի վարքագիծը⁹:

Նույն հանձնարարականի 7-րդ կետի «c» ենթակետի համաձայն՝ անձը կարող է պահվել կալանքի տակ, եթե փախուստի դիմելու, ծանր հանցանք կատարելու, արդարադատության իրականացմանը միջամտելու կամ հասարակական կարգի պահպանությանը լուրջ սպառնալիք ներկայացնելու վերաբերյալ ենթադրությունները չեն կարող փարատվել ալընտրանքային միջոցների կիրառմամբ¹⁰:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի՝ «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի անդամ պետություններում մինչդատական կալանքի չարաշահման մասին» բանաձևի 1-ին կետի համաձայն՝ մինչդատական կալանքը պետք է կիրառվի բացառիկ դեպքերում, որպես վերջին միջոց (last resort), երբ այլընտրանքային միջոցները բավարար չեն վարույթի պատշաճ ընթացքը երաշխավորելու համար¹¹:

«Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ» ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնների («Տոկիոյի կանոններ») 6.1-րդ կետի համաձայն՝ մինչդատական կալանքը քրեական դատավարությունում պետք է կիրառվի որպես վերջին միջոց (last resort)՝ հաշվի առնելով նախաքննության խնդիրները, հասարակության և տուժողի պաշտպանությունը¹²:

9

Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված՝ կալանքի կիրառման, դրա համար անհրաժեշտ պայմանների և չարաշահումներից պաշտպանության երաշխիքների վերաբերյալ 2006 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ (2006)13 հանձնարարականը:

10

Տե՛ս նույն տեղում:

11

Տե՛ս Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի՝ «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի անդամ պետություններում մինչդատական կալանքի չարաշահման մասին» 2015 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 2077 (2015) բանաձևը:

12

Նույն կանոնների 6.2-րդ կետի համաձայն՝ մինչդատական կալանքի այլընտրանքային միջոցները պետք է կիրառվեն հնարավորինս վաղ փուլում¹³:

Վերոնշյալ իրավական փաստաթղթերում տեղ գտած պահանջների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների հաշվառմամբ պետք է արձանագրել, որ գործող քրեական դատավարության օրենսգրքում նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների համակարգը թերի է: Մասնավորապես, գործող կարգավորումների դեպքում օրենսդիրը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց է նախատեսել միայն գրավը:

Մինչդեռ, վաղուց արդեն հրամայական է դարձել գործող օրենսգիրքն այնպիսի այլընտրանքային միջոցներով լրացնելն, ինչպիսիք են տնային կալանքը կամ վարչական հսկողությունը:

Այսպես, տնային կալանքն անձի ազատության իրավունքի այնպիսի սահմանափակում է, որի կիրառմամբ մեղադրյալը պարտավորվում է չլքել դատարանի որոշման մեջ նշված բնակության վայրը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն՝ տնային կալանքի նկատմամբ տարածվում են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածով սահմանված երաշխիքները, ուստի անձին ազատությունից զրկելու ընթացակարգի, այդ թվում՝ համապատասխան հիմքերի և պայմանների առկայության հարցը լուծելիս *mutatis mutandis* կիրառելի են անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերն ու պայմանները¹⁴:

Տե՛ս «Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ» 1990 թվականի դեկտեմբերի 14-ի ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները («Տոկիոյի կանոններ»):

13

Տե՛ս նույն տեղում:

14

Ինչ վերաբերում է վարչական հսկողությանը, ապա այն սահմանափակում է անձի տեղաշարժման ազատությունը, որի պայմաններում անձը պարտավորվում է որոշակի ժամանակահատվածի ընթացքում ներկայանալ և գրանցվել դատարանի որոշման մեջ նշված իրավասու մարմնում: Այլ կերպ, տվյալ խափանման միջոցի կիրառման պարագայում անձի նկատմամբ սահմանվում է հսկողություն՝ համապատասխան վարչական մարմնի միջոցով:

Միևնույն ժամանակ, նշված խափանման միջոցների կիրառման ողջ ժամանակահատվածում անձի վարքագծի նկատմամբ հսկողություն պետք է իրականացվի հատուկ էլեկտրոնային միջոցների կիրառմամբ: Մեղադրյալը պարտավորվում է իր վրա մշտապես կրել նշված էլեկտրոնային հսկողության միջոցները, չվնասել դրանք, ինչպես նաև արձագանքել իրավասու մարմնի հսկողության ազդանշաններին: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենսդրական կարգավորումների ընդունման շրջանակներում դեռևս 2017 թվականի նոյեմբերի 9-ին ՀՀ կառավարության թիվ 1440-Ն որոշմամբ սահմանվել է էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման և ֆինանսավորման կարգը: Այդ որոշման հավելվածի համաձայն՝ էլեկտրոնային հսկողության կիրառման ժամանակ օգտագործվում է էլեկտրոնային հսկողության միջոցների երկու տեսակ՝ գլոբալ տեղորոշման համակարգով (GPS) աշխատող և ռադիոալիքային սարքավորումներ:

Նույն հավելվածի համաձայն՝ բնակության վայրը չլքելու հետ կապված խափանման միջոցների վերահսկման դեպքում օգտագործվում են ռադիոալիքային սարքավորումներ՝ անձնական նույնականացման սարքը և ֆիքսված վերահսկման սարքակազմը: Իսկ օրենքով սահմանված

Տե՛ս Buzadji v. The Republic of Moldova գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռը, գանգատ թիվ 23755/07, կետեր 103-րդ, 105-րդ, 113-րդ:

էլեկտրոնային հսկողության այլ դեպքերում օգտագործվում են տեղորոշման համակարգով (GPS) աշխատող սարքավորումներ՝ անձնական նույնականացման և GPS արբանյակային վերահսկողության սարքերը:

Այսինքն՝ գործող կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համապատասխան էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման իրավական հիմքերը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված են: Ավելին, ՀՀ ԱՆ Պրոբացիայի պետական ծառայության պաշտոնական կայքէջի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում նշված էլեկտրոնային հսկողության միջոցները կիրառվել են նաև համապատասխան պիլոտային ծրագրի շրջանակներում¹⁵:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է ընդգծել, որ ինչպես տնային կալանք, այնպես էլ վարչական հսկողություն խափանման միջոցների կիրառման ընթացքում անձի նկատմամբ կարող են նախատեսվել լրացուցիչ սահմանափակումներ և արգելքներ: Մասնավորապես, կարող է արգելվել շփում ունենալ որոշակի անձանց հետ կամ այցելել որոշակի վայրեր կամ կարող են սահմանվել այլ արգելքներ կամ սահմանափակումներ:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արտասահմանյան երկրները դեռևս տարիներ առաջ իրենց օրենսդրությունը բարեփոխումների են ենթարկել և նախատեսել կալանավորման մի շարք այլընտրանքային միջոցներ՝ այդ կերպ նաև վարույթն իրականացնող մարմինն հնարավորություն ընձեռելով խափանման միջոցի ընտրությունը կատարել անհատականացված ձևով, հաշվի առնելով յուրաքանչյուր գործի փաստական հանգամանքները և հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի դրսևորած վարքագիծը: Մասնավորապես, ինչպես ԱՊՀ

15

Տե՛ս <http://probation.am/en/node/236>

երկրների՝ Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Մոլդովայի, այնպես էլ եվրոպական երկրների՝ Ֆրանսիայի, Լեհաստանի, Իտալիայի և մի շարք այլ երկրների քրեական դատավարության օրենսգրքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ երկրներում նախատեսված են կալանավորման այլընտրանքային խափանման միջոցներ, ինչպիսիք են տնային կալանքը կամ որոշակի վայրից չբացակայելու արգելք պարունակող խափանման միջոցները: Այլընտրանքային խափանման միջոցների ամբողջական ցանկը նախատեսված է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված՝ կալանքի կիրառման, դրա համար անհրաժեշտ պայմանների և չարաշահումներից պաշտպանության երաշխիքների վերաբերյալ 2006 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ (2006)13 հանձնարարականի 2-րդ կետում, որտեղ ի թիվս այլոց, նախատեսված է անձնագիր վերցնելը¹⁶, որոշակի ժամանակահատվածի կտրվածքով ուստիկանությունում կամ այլ մարմնում գրացվելը կամ դրամական կամ այլ միջոցներ տրամադրելը՝ դատաքննությանը ներկայանալը երաշխավորելու համար:

16

Անձնագիր վերցնելը պետք է նախատեսել որպես ինքնուրույն խափանման միջոց: Ցավոք ներկայումս անձից իր անձնագիրը վերցնելը համատեղվում է ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման հետ, որպիսի մոտեցման իրավական հիմքերը նախատեսված չեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում: Ավելին, հարկ է նկատել, որ տրված ստորագրությունը արժեզրկվում է, երբ այն լրացուցիչ «ապահովագրվում է» նաև անձից վերցվող անձնագրով: Ընդ որում, պետք է նշել, որ ներկայումս ձևավորված պրակտիկայի պայմաններում անձից իր անձնագիրը չի վերցվում գրավի կիրառման դեպքում, սակայն ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի դեպքում վերցվում է: Ինչ վերաբերում է «Անձնագրի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգավորումներին, ապա դրանք անորոշ են և վերացական, որոնց արդյունքում անձից իր անձնագիրը կարող է վերցվել նույնիսկ կասկածյալի կարգավիճակ ունենալու դեպքում: Մինչդեռ, միջազգային փորձը վկայում է, որ ոչ որպես խափանման միջոց անձից իր անձնագիրը կարող է վերցվել բացառիկ դեպքերում, երբ վերջինս զրկվում է իր ազատությունից: Բարձրացված խնդրի էությունը ներկայացնելու համար

Մինչդեռ, ՀՀ-ում գործող քրեական դատավարության օրենսգրքը անձին ազատությունից զրկելու հետ կապված՝ կալանավորում խափանման միջոցի համար նախատեսում է միայն մեկ այլընտրանք՝ գրավը, որն օրենսգրքում տեղ գտած որոշ կարգավորումների պատճառով չի համարվում գործուն միջոց՝ անձի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորումը լիարժեք չեզոքացնելու համար:

Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանը դեռևս 2014 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ արձանագրել է, որ գրավը կարող է կիրառվել վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով և մեղադրյալի կողմից դատավարության մասնակիցների վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով վարույթի պատշաճ ընթացքին խոչընդոտելու վտանգի չեզոքացման գործուն երաշխիք չի կարող հանդիսանալ¹⁷:

Վերոնշյալ մեկնաբանությունը հիմնված է գրավի հետ կապված կարգավորումներին նվիրված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի վերլուծության վրա, որտեղ օրենսդիրը գրավը կիրառումը պայմանավորում է վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հետ: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավը կիրառվում է քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով: Ավելին, նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գրավի գումարը կարող է դարձվել պետական սեփականություն միայն այն դեպքերում, երբ մեղադրյալը թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ առանց թույլտվության մեկնել է այլ տեղանք: Նման

17

Տե՛ս Դավիթ Վարդանյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԱԲԴ/0056/06/14 որոշումը, 16-րդ կետ:

պայմաններում, ստացվում է, որ գրավն արդյունավետ խափանման միջոց է միայն անձի՝ վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու ռիսկը կանխելու համար: Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ խափանման միջոցի կիրառման այլ հիմքերի առկայության դեպքում, եթե մեղադրյալը խախտի դրանց պայմանները, ապա գրավը չի կարող դարձվել պետական սեփականություն: Այսպես, օրինակ՝ մեղադրյալի կողմից մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու դեպքում գրավի առարկան պետական սեփականություն դարձվել չի կարող, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 6-րդ մասը չի նախատեսում այդ դեպքում գրավի գումարի պետականացման հնարավորություն: Արդյունքում, ստացվում է, որ նշված դեպքում գրավը չի կարող համարվել գործուն միջոց անձի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորումը զսպելու համար, որպիսի պայմաններում անձի ազատության իրավունքի սահմանափակումը չի ունենում որևէ այլընտրանք, ինչը համատեղելի չէ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի պահանջների հետ:

Բարձրացված խնդիրը պարունակում է նաև մի շարք վտանգներ: Մասնավորապես, հաճախ վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող կալանավորման միջնորդությունում կարող է նշվել օրինակ՝ անձի՝ մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու հիմքը, որի պարագայում ի սկզբանե առնվազն նվազում է անձի նկատմամբ գրավի կիրառման հնարավորությունը (հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատարանը կարող է հաստատված չհամարել դրա առկայությունը):

Հետևաբար, որպես խնդրի լուծում անհրաժեշտ է վերանայել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասը՝ գրավի կիրառումը պայմանավորելով ոչ թե անձի՝ վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ գտնվելն ապահովելու, այլ առհասարակ անձի՝ ոչ իրավաչափ վարքագծի դրսևորումը կանխելու նպատակի հետ: Բացի այդ, անհրաժեշտ է նաև վերանայել նույն հոդվածի 6-րդ մասը՝ գրավի առարկայի պետականացման հնարավորություն նախատեսելով ոչ միայն վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու, այլ առհասարակ անձի՝ ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման դեպքում:

Վերոգրյալի հետ մեկտեղ, պետք է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանի կայքէջի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ՀՀ վճռաբեկ դատարանը վերոնշյալ իրավակարգավորումների սահմանադրականությունը ստուգելու պահանջով դիմել է ՀՀ սահմանադրական դատարան, որտեղ գործի դատաքննությունը թեև նշանակված էր սույն թվականի հունիսի 25-ին, սակայն հետաձգվել է հոկտեմբերի 8-ին¹⁸:

Գրավի կիրառման հետ կապված հաջորդ հիմնախնդիրը վերաբերում է այն հանգամանքին, որ գրավը որպես այդպիսին դիտարկվում է այլընտրանք կալանավորմանը: Այսինքն՝ գրավի կիրառման համար դատարանը պետք է կիրառի կալանավորումը, որպեսզի կարողանա քննարկման առարկա դարձնել որպես խափանման միջոց գրավն ընտրելու հնարավորության հարցը: Գործնականում, լինում են այնպիսի իրավիճակներ, երբ վարույթն իրականացնող մարմինը դեմ չի լինում գրավի կիրառմանը, ավելին, գտնում է, որ գործող խափանման միջոցների համակարգում այն կարող է լինել ամենից արդյունավետը, սակայն այն պատճառով, որ գրավն ինքնուրույն խափանման

18

Տե՛ս <http://concourt.am/armenian/decisions/working/2019/pdf/sdav-53.pdf>

միջոց չի հանդիսանում, ստիպված է լինում դատարան ներկայացնել և պնդել անձին ազատությունից զրկելու վերաբերյալ կալանավորման միջնորդության հիմնավորվածությունը: Արդյունքում, ստացվում է, որ օրենսդրական կարգավորումների հետևանքով նման իրավիճակներում անձի նկատմամբ կալանավորման կիրառումը դառնում է արհեստական, քանի որ այն ընդամենը անցումային միջոց է հանդիսանում գրավի քննարկմանն անցում կատարելու համար: Նման պայմաններում, հարկ է վերանայել գրավ խափանման միջոցի բնույթը, այն դիտարկելով ոչ թե որպես կալանավորման այլընտրանք, այլ որպես ինքնուրույն խափանման միջոց, որն ընտրելու իրավասությամբ օժտված կլինի նաև վարույթն իրականացնող մարմինը:

Միևնույն ժամանակ, անդրադառնալով գրավի գումարի առավելագույն չափ սահմանելու մասին իրավակիրառողների մտահոգություններին՝ պետք է նշել, որ այդպիսի առաջարկությունը հիմնավոր չի թվում: Մասնավորապես, գրավի գումարը յուրաքանչյուր դեպքում ենթակա է որոշման ելնելով հանցանք կատարած անձի գույքային դրությունից, կատարված հանցանքի բնույթից և այլ հանգամանքներից, որոնք կրում են անհատական բնույթ: Այլ կերպ, յուրաքանչյուր դեպքում դատարանը գրավի չափ սահմանելիս հաշվի է առնում գործի կոնկրետ փաստերը և հանգում համապատասխան հետևության: Ընդ որում, հարկ է ընդգծել, որ գրավի գումարի սահմանումն ինքնին դեռ չի ենթադրում, որ անձը պետք է ազատ արձակվի: Այսպես, միայն գրավի գումարի վճարման դեպքում է, որ անձը ենթակա է ազատ արձակման: Մնացած բոլոր դեպքերում, երբ անձը չի կարողանում վճարել սահմանված գումարը, կարող է վիճարկել նշանակված գրավի գումարի չափը՝ պնդելով, որ այն չի համապատասխանում համաչափության սկզբունքին: Նշված մոտեցումն ընդունելի է նաև արտասահմանյան երկրներում: Այսպես, մեր կողմից կատարված միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է այն

մասին, որ օրենսդրությամբ գրավի առավելագույն չափեր չեն սահմանվում: Հարկ է նշել, որ անգլոսաքսոնական իրավական համակարգում, որտեղ գրավի կիրառումն առավել մեծ տարածում ունի, մշակված է «Excessive bail»-ի արգելքը¹⁹, որի համաձայն՝ գրավի գումարի սահմանումը չպետք է չարաշահվի, այն չպետք է վերածվի պատժի՝ խախտելով անձի անմեղության կանխավարկածը և ԱՄՆ Սահմանադրության 8-րդ փոփոխությունը: Նշված մոտեցումն ընդունելի է համարել նաև ԱՄՆ Գերագույն դատարանն իր մի շարք որոշումներում:

Վերոգրյալի հիման վրա պետք է փաստել, որ գրավի գումարի առավելագույն չափի սահմանման առաջարկությունը հիմնավոր չի թվում: Ավելին, թեև գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված են գրավի կիրառման նվազագույն շեմեր, սակայն դրանք նույնպես ենթակա են վերացման: Մասնավորապես, դեռևս 1998 թվականին՝ քրեական դատավարության օրենսգրքի ընդունման ժամանակ, օրենսդիրը նախատեսել է, որ ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքում գրավի գումարը չի կարող պակաս լինել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափից, իսկ միջին ծանրության հանցագործությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափից: Ակնհայտ է, որ նշված գումարի չափերն օրենսգրքի ընդունումից ավելի քան 20 տարի անց այլևս արդիական չեն՝ դրամական միավորի ունեցած արժեքի փոփոխության հետևանքով: Ավելին, հարկ է նշել, որ տարիների ընթացքում ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների համար գրավի նվազագույն չափի սահմանման բացակայությունը երբևէ խնդիր չի առաջացրել²⁰: Նման

19

Տե՛ս <https://www.govinfo.gov/content/pkg/GPO-CONAN-1992/pdf/GPO-CONAN-1992-10-9.pdf>

20

պայմաններում, հաշվի առնելով նաև վերը վկայակոչված՝ յուրաքանչյուր դեպքում անհատական մոտեցում դրսևորելու անհրաժեշտությունը, պարզ է դառնում, որ ոչ միայն կարիք չկա սահմանելու գրավի գումարի առավելագույն չափեր, այլ նույնիսկ գրավի առարկայի նվազագույն չափերն են ենթակա վերացման:

Միևնույն ժամանակ, իրենից հետաքրքրություն է ներկայացնում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ գործերի դատական քննության հրապարակայնության ապահովման հարցը: Մասնավորապես, իրավակիրառողների մի խումբ գտնում է, որ նախնական կալանքի կիրառման և դրա ժամկետի երկարացման վերաբերյալ գործերի դատական քննությունը պետք է տեղի ունենա ոչ թե դռնփակ, ինչպես պահանջում է գործող քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածը, այլ դռնբաց ռեժիմով: Այլ կերպ, տվյալ պարագայում առաջարկվում է վերացնել օրենքի ուժով դռնփակ դատական քննություն անցկացնելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումը:

Հարկ է նաև նշել, որ իրավակիրառողների մյուս մասն էլ գտնում է, որ նախնական կալանքի կիրառման և դրա ժամկետի երկարացման վերաբերյալ գործերի դատական քննությունը դռնբաց անցկացնելն իրավաչափ չէ, քանի որ այդ կերպ վտանգվում է նախաքննական գաղտնիքի պաշտպանությունը: Այսինքն՝ նշված մոտեցման կողմնակիցները գտնում են, որ նախաքննական գաղտնիքի պաշտպանությունն արդարացնում է հրապարակային դատալսումներն օրենքի ուժով սահմանափակելը: Միևնույն ժամանակ,

Թեև օրենսդրական կարգավորումների համաձայն՝ մինչ օրս գրավի կիրառումը թույլատրելի է միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների կատարման դեպքում, սակայն Տարոն Հակոբյանի գործով Վճռաբեկ դատարանը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների հաշվառմամբ 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-115/07 որոշմամբ գտավ, որ անկախ հանցագործության ծանրության աստիճանից գրավի կիրառումը թույլատրելի է:

որպես լրացուցիչ փաստարկ մատնանշվում է այն հանգամանքը, որ նախնական կալանքի քննության ժամանակ՝ գործի քննության դեռևս սկզբնական ժամանակահատվածում, հանրային հուզումների մակարդակը բարձր է, ինչն էլ ավելի կարող է սրվել հրապարակային լսումներ անցկացնելու պայմաններում:

Իրականում, ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի ուսումնասիրությունից հետևում է, որ այն պահանջում է, որպեսզի գործի քննությունն իրականացվի դռնբաց, քանի դեռ չի հիմնավորվել դռնփակ ռեժիմով գործը քննելու անհրաժեշտությունը: Այսինքն՝ քանի դեռ չի պարզվել դռնփակ քննություն անցկացնելու հիմքերի առկայությունը:

Ավելին, հարկ է ընդգծել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն՝ գործի նյութերում գաղտնի տեղեկությունների սուկ առկայությունն ինքնաբերաբար չի ենթադրում, որ դատաքննությունը պետք է փակ լինի հանրության համար՝ այդպիսով հաշվի չառնելով բաց դատաքննության ապահովման և ազգային անվտանգության մասով նկատառումների միջև հավասարակշռությունը: Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հանրության ներկայությունը քրեական գործով դատաքննության ընթացքում չթույլատրելուց առաջ դատարանները պետք է բացահայտեն հատուկ փաստեր, որ դատաքննությունը փակելն անհրաժեշտ է պետության գերակա շահը պաշտպանելու համար, և պետք է սահմանափակեն գաղտնիությունն այնքանով, որքանով որ անհրաժեշտ է այդպիսի շահը պահպանելու համար²¹:

21

Վերոգրյալի հիման վրա պետք է արձանագրել, որ նախնական կալանքի և դրա ժամկետի երկարացման վերաբերյալ միջնորդությունների դատական քննությունը պետք է տեղի ունենա որպես կանոն դռնբաց ռեժիմով, քանի դեռ դատարանը կողմի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ որոշում չի կայացրել կալանավորման մասին միջնորդության քննությունը արդարադատության շահի պաշտպանությունից ելնելով դռնփակ անցկացնելու վերաբերյալ: Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածում տեղ գտած կարգավորումը ենթակա է վերանայման:

Վերոգրյալի հետ մեկտեղ հակիրճ անդրադարձ կատարենք նաև ՀՀ քրեակատարողական հիմնարկների, մասնավորապես՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պայմանների խնդրին: Թեև այն վերջին տարիների ընթացքում բազմիցս բարձրացվել է, սակայն այս քրեակատարողական հիմնարկը ՀՀ-ում շարունակվում է շահագործվել: «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկը կառուցվել է 1981 թվականին և շահագործման է հանձնվել որպես քննչական մեկուսարան: Սակայն, կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված քրեակատարողական հիմնարկը, որը նախատեսված է նաև կալանավորների համար, չի համապատասխանում միջազգային պահանջներին: Պահպանված չեն յուրաքանչյուր անձի համար սահմանվող 4 քմ նվազագույն տարածքի ապահովման պահանջները: Ավելին, սույն ծրագրի շրջանակներում հարցման ենթարկված մի շարք փաստաբաններ նշել են, որ այս քրեակատարողական հիմնարկը չունի նվազագույն պայմաններ, որոնք անհրաժեշտ են կալանավորված անձանց հետ հանդիպելու և ցուցաբերվող փաստաբանական

Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Belashev v. Russia գործով 2008 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 28617/03, 83-րդ կետ, Welke and Białek v. Poland գործով 2011 թվականի մարտի 1-ի վճիռը, գանգատ թիվ 15924/05, 77-րդ կետ:

օգնության առանձին հանգամանքներ քննարկելու համար: Հետևաբար, իրականացված հետազոտության շրջանակներում կրկին անգամ հրավիրվում է իրավասու մարմինների ուշադրությունը «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի ոչ բարվոք պայմանների վերաբերյալ մշտապես բարձրացվող խնդիրը վերջնականապես հանգուցալուծելու համար:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Կառուցողական երկխոսություն հանձնառություն» ծրագրի շրջանակներում «Սոցիալական Տեխնոլոգիաների Կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Կոռուպցիոն ռիսկերն անձանց կալանավորման իրավակիրառ պրակտիկայում և օրենսդրական խոչընդոտների բարելավման հիմնահարցեր» ծրագրի շրջանակներում հանրային քաղաքականության մոնիթորինգի իրականացման, ոլորտի բարեփոխման, ծրագրային խնդիրների լուծման նպատակներով միջոցներ են ձեռարկվել կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու գործընթացին անմիջականորեն առնչվող անձանցից անհրաժեշտ տեղեկատվություններ ստանալու, դրանք վերլուծելու և ոլորտում առկա հիմնական խնդիրները վեր հանելու համար:

Ուսումնասիրության արդյունքում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու իրավակիրառ գործընթացի ընթացքում ծագող հիմնախնդիրների վերաբերյալ կատարվել են հետևյալ եզրահանգումները.

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով բացակայում են ազատությունից զրկելու հետ չկապված գործուն խափանման միջոցներ,

- ներկայումս կալանավորման միակ այլընտրանքային խափանման միջոցը՝ գրավը գործուն խափանման միջոց չէ,

- խափանման միջոց կիրառելու ոչ բոլոր հիմքերով գրավն ընտրելու անհնարինության պայմաններում կալանավորումը չի ունենում այլընտրանք, որպիսի պարագայում նաև առաջ է գալիս քրեական հետապնդման մարմինների կողմից կալանավորման միջնորդությունում լրացուցիչ հիմքերի մատնանշմամբ անբարեխիղճ վարքագծի դրսևորման վտանգը՝ գրավի կիրառումը դատարանում առհասարակ բացառելու նպատակով,

- գրավը չհանդիսանալով ինքնուրույն խափանման միջոց՝ անհնարին է դարձնում այն միանգամից նախաքննական մարմնի կողմից ընտրելու հնարավորությունը, ինչը հանգեցնում է նրան, ով վերջինս որոշ դեպքերում անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը դատարան է ներկայացնում հարկադրված,

- գործող օրենսդրությամբ գրավի գումարի սահմանման առավելագույն չափեր նախատեսված չեն, ինչը որոշ դեպքերում մտահոգում է իրավակիրառողներին,

- կոռուպցիոն ռիսկերի բացառման, թափանցիկության և հրապարակայնության սկզբունքների երաշխավորման տեսանկյունից կարող է քննարկման առարկա դարձվել դոնբաց ռեժիմով կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունների քննության անցկացումը,

- ՀՀ տարածքում գործող քրեակատարողական հիմնարկներից «Նուբարաշեն» ՔԿՀ-ն կալանավորների պահման պայմաններով չի համապատասխանում սահմանված չափանիշներին,

- կալանքը քրեական հետապնդման մարմինների կողմից որպես պատիժ կիրառելու հնարավոր պրակտիկան նվազագույնի հասցնելու

նպատակով որպես լուծում կարելի է դիտարկել համագործակցության վարույթի ներդրումը քրեական դատավարությունում:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը պետք է արձանագրել, որ գործող քրեական դատավարության օրենսգրքում նախատեսված խափանման միջոցների համակարգը ենթակա է վերանայման, ընդ որում՝ առավելապես քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունման ճանապարհով, ինչը հնարավորություն կտա համակարգային առումով իրականացնել արմատական բարեփոխումներ²², որոնց շնորհիվ էապես կբարելավվի նաև կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ ներկայումս ձևավորված իրավակիրառ պրակտիկան: Այնուամենայնիվ, մինչ այդպիսի համակարգային բարեփոխումներին անցում կատարելը՝ սույն ուսումնասիրության շրջանակներում բարձրացված խնդիրների գերակշիռ մասը կարող է լուծվել նաև ներկայացված առաջարկությունները համապատասխան փոփոխությունների և լրացումների միջոցով գործող քրեական դատավարության օրենսգրքում ներառելու եղանակով, որոնք ներկայացված են կից՝ հավելված 1-ում:

22

Այսպես, օրինակ՝ կալանքը քրեական հետապնդման մարմինների կողմից որպես պատիժ կիրառելու հնարավոր պրակտիկան նվազագույնի հասցնելու նպատակով որպես լուծում կարելի է դիտարկել համագործակցության վարույթի ներդրումը քրեական դատավարությունում, ինչը հնարավորություն կընձեռի հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի հետ իրավական ճանապարհով համագործակցել՝ դրա դիմաց առաջարկելով համապատասխան նպաստավոր պայմաններ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 11-րդ հոդվածի 3-րդ մասում «Կալանավորելը, կալանքի տակ պահելը,» բառերը փոխարինել «Կալանավորումը, տնային կալանքը, վարչական հսկողությունը, դրանց ժամկետի երկարաձգումը» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «կալանքի ժամկետի երկարաձգման» բառերը փոխարինել «տնային կալանքի, վարչական հսկողության կիրառման, դրանց ժամկետի երկարաձգման» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 53-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի 5-րդ կետում «մեղադրյալի նկատմամբ կալանքը» բառերից հետո ավելացնել «տնային կալանքը կամ վարչական հսկողությունը» բառերը, «և նրան կալանքի» բառերը փոխարինել և «կամ նրան կալանքի, տնային կալանքի կամ վարչական հսկողության» բառերով:

2) 3-րդ մասի 7-րդ կետում «կալանավորման,» բառից հետո ավելացնել «տնային կալանքի, վարչական հսկողության» բառերը:

Հոդված 4. Օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի՝

1) 8-րդ կետում «կալանավորման,» բառից հետո լրացնել «տնային կալանքի, վարչական հսկողության,» բառերը,

2) 22-րդ կետում յուրաքանչյուր «բացառությամբ կալանքի» բառերից հետո լրացնել «տնային կալանքի կամ վարչական հսկողության» բառերը, ինչպես նաև «իր որոշմամբ ազատել կալանքի» բառերից հետո լրացնել «տնային կալանքի կամ վարչական հսկողության» բառերը,

3) 24-րդ կետում «մեղադրյալի նկատմամբ կալանքը» բառերից հետո լրացնել «տնային կալանքը կամ վարչական հսկողությունը» բառերը, «մեղադրյալին կալանքի» բառերից հետո լրացնել «տնային կալանքի կամ վարչական հսկողության» բառերը:

Հոդված 5. Օրենսգրքի 134-րդ հոդվածում.

1) 2-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ և 1.2-րդ կետերով.

«1.1) տնային կալանքը.

1.2) վարչական հսկողությունը.»:

2) 3-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 6. Օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասում «կալանավորումը և դրա այլընտրանքային խափանման միջոցը» բառերը փոխարինել «կալանավորումը, տնային կալանքը, վարչական հսկողությունը և գրավը» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 143-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու» բառերը փոխարինել «սույն օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողությունների կատարումը կանխելու» բառերով:

2) 6-րդ մասում «Եթե մեղադրյալը թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ՝ առանց թույլտվության մեկնել է այլ տեղանք.» բառերը փոխարինել «Եթե մեղադրյալը կատարում է սույն օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողությունները»:

3) 4-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 8. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 142.1-րդ և 142.2-րդ հոդվածներով.

«Հոդված 142.1. Տնային կալանքը

1. Տնային կալանքը մեղադրյալի ազատության այնպիսի սահմանափակում է, որի ընթացքում նա պարտավոր է չլքել դատարանի որոշման մեջ նշված բնակության տարածքը:

2. Դատարանի որոշմամբ մեղադրյալին կարող է արգելվել նաև՝

1. ունենալ հեռախոսային հաղորդակցություն, ուղարկել կամ ստանալ նամակագրություն, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներ, օգտվել կապի այլ միջոցներից.

2. շփում ունենալ որոշակի անձանց հետ կամ իր բնակության վայրում հյուրընկալել այլ անձանց:

3. Տնային կալանք կիրառելու մասին դատարանի որոշման մեջ նշվում են այն կոնկրետ սահմանափակումները, որոնք տարածվում են մեղադրյալի

նկատմամբ, ինչպես նաև իրավասու այն մարմինը, որին հանձնարարվում է այդ սահմանափակումների պահպանման նկատմամբ վերահսկողությունը:

4. Մեղադրյալի վարքագծի նկատմամբ հսկողությունը դատարանի որոշմամբ իրականացվում է օրենսդրությամբ սահմանված հատուկ էլեկտրոնային միջոցներով: Մեղադրյալը պարտավոր է իր վրա մշտապես կրել նշված էլեկտրոնային հսկողության միջոցները, չվնասել դրանք, ինչպես նաև արձագանքել իրավասու մարմնի հսկողության ազդանշաններին:

5. Տնային կալանքի կիրառման կարգի, ժամկետների և բողոքարկման վրա տարածվում են կալանքի համար սույն օրենսգրքով սահմանված դրույթները:

6. Տնային կալանքի մեկ օրը հավասար է կալանքի մեկ օրվան:

Հոդված 142.2. Վարչական հսկողությունը

1. Վարչական հսկողությունը մեղադրյալի տեղաշարժման և գործողությունների ազատության սահմանափակումն է, որի պայմաններում նա պարտավոր է ոչ հաճախ, քան շաբաթը երեք անգամ գրանցվել դատարանի որոշման մեջ նշված վայրի իրավասու մարմնում:

2. Դատարանի որոշմամբ մեղադրյալին կարող է արգելվել նաև՝

1. առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության փոխելու մշտական կամ ժամանակավոր բնակության վայրը՝ համայնքը, իսկ Երևան քաղաքում՝ վարչական շրջանը.
2. այցելելու որոշման մեջ նշված որոշակի վայրեր.
3. հաղորդակցվելու որոշակի անձանց հետ.
4. օրվա որոշակի ժամերին լքելու իր բնակության տարածքը, սակայն ոչ ավել, քան 12 ժամը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված արգելքները սահմանելիս հաշվի են առնվում մեղադրյալի առողջական վիճակը, ինչպես նաև աշխատանքի և ուսման պայմանները:

4. Մեղադրյալի նկատմամբ վարչական հսկողություն կիրառելու մասին որոշման պատճենը կատարման նպատակով ուղարկվում է դատարանի կողմից սահմանված իրավասու մարմնին:

5. Իրավասու մարմինն անհապաղ գրանցում է մեղադրյալին և նրան հսկողության ընդունելու մասին տեղյակ պահում վարույթն իրականացնող մարմնին:

6. Մեղադրյալի վարքագծի նկատմամբ հսկողությունը դատարանի որոշմամբ իրականացվում է օրենսդրությամբ սահմանված հատուկ էլեկտրոնային միջոցներով: Մեղադրյալը պարտավոր է իր վրա մշտապես կրել նշված էլեկտրոնային հսկողության միջոցները, չվնասել դրանք, ինչպես նաև արձագանքել իրավասու մարմնի հսկողության ազդանշաններին:

7. Վարչական հսկողության կիրառման կարգի և բողոքարկման վրա տարածվում են կալանքի համար սույն օրենսգրքով սահմանված դրույթները»:

Հոդված 9. Օրենսգրքի 271-րդ հոդվածի 2-րդ մասում «անձի՝ կալանքի» բառերից հետո լրացնել «տնային կալանքի կամ վարչական հսկողության» բառերը:

Հոդված 10. Օրենսգրքի 275-րդ հոդվածում «դիմել դատարան՝ կալանքը» բառերից հետո լրացնել «տնային կալանքը կամ վարչական հսկողությունը» բառերը:

Հոդված 11. Օրենսգրքի 280-րդ հոդվածում «կալանքը» բառից հետո լրացնել «, տնային կալանքը, վարչական հսկողությունը» բառերը:

Հոդված 12. Օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ կերպ.

«1. Դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունները քննում է դատավորը միանձնյա, դռնբաց դատական նիստում՝ միջնորդությամբ դիմած պաշտոնատար անձի կամ նրա ներկայացուցչի մասնակցությամբ:

Քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ միջնորդությունները քննում է դատավորը միանձնյա, դռնփակ դատական նիստում՝ միջնորդությամբ դիմած պաշտոնատար անձի կամ նրա ներկայացուցչի մասնակցությամբ»:

Հոդված 13. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:



